

Ուետաղներու մեծ մասը առանց բազագրութեան ալ՝ աւելի պնդութիւն ու առաձգականութիւն կ'առնուն թէ որ յուրա ծեծուելու ըլլան : Դիւրին փորձ մը ըսենք՝ որով ծեծելու ազգեցութիւնը կ'իմացուի : Պղնձի երկու թիթեղ առ, և մէկը պաղ պաղսալի՝ վրայ ծե-

ծէ . ետքը ծուէ զանոնք . թէ որ ծուելէն ետև ինքիրեննուն թողուս, ծեծուածը նորէն գրեթէ իր առջի վիճակը կը դառնայ . իսկ մէկալը ինչուէս որ կորցուցիր՝ անանկ կը մնայ :

Կը շարանակուի :

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Ե Պ Բ

Հիմակուան Արեւելեան պատերազմը : ( Տես երես 223 )

### ՆՈՅԵՄԲԵՐ

1. Ռուսաց կայսոր այսպիսի յայտարարութիւն մը կ'ընէ . Ռուսաստան պատերազմի դըրդը ու եցաւ . իրեն ուրիշ բան չմնար ընելու՝ բայց եթէ զենքերը ձեռք առնէ , որպէս զի օմանեան դահլիճը դաշնադրութիւնները պահելու բռնադատէ և անկէց հատուցումն առնէ այն խնամներուն , որ ինքը մեզի առուաւ՝ մեր ըրած չափաւորեալ խնդիրներուն ու արեւելքի յունադաւաւան կրօնից պաշտպանութեան համար մեր տարած խնամքներուն դէմ :
2. Տաճիկները կը յարձակին ճիւրճեւոյի վերսոյ . բայց Ռուսերը կը վանեն զանոնք :
3. Անդիլոյ ու Գաղղիոյ նաւատորմիով Վոսփոր կը մանէ . ( տես 18 հոկտ . ) :
4. Տաճիկները Դանուբը կ'անցնին Դոդուրքանի քովվերը , որ Ռուսածուքի ու Սիկսարէի մէկերը կ'իյնայ , և կ'ամրանան Վալսփիոյ Օլդէնիձան գեղին մէջ , որ Պուդրէչէն 16 փարսախ հեռու է :
5. Ռուսերը կը յարձակին Տաճկաց Օլդէնիձայի մօտ կանգնած պատնէշներուն վրայ , բայց կը բռնադատառուին ետ դառնալու : — Ետեի օրերը դարձեալ կը շարունակէ պատերազմը , և 12ին Տաճիկները իրենք իրենցմէ պատնէշները օդ հանելն եաբը՝ Դանուբի աջակողման ափանց վրայ կը քաշուին :
6. Դովային զինուորութեան գլխաւորները կ'իմացնեն կոստանդնուուղովս հաստատուած ու ուս վաճառականներուն , որ 15 օրուան միջոցէն ետքը՝ ամէն ու ուսի դրօշակով գըտնուած նաւերը արքունիք պիտի դրաւուին :
7. Ռուսաստանի մաքսատանց պաշտոնեայն վեժիու մը կը հանէ . Ռուսաց նաւահանգիստներուն մէջ դանուած բոլոր Տաճիկի նաւերը՝ կրնան առանց արգելքի մը ինչուան նոյեմբերի 22 դուրս ելլել : Իսկ չեզդր կեցով ազգաց գաճառականական նաւերուն դալով՝ անոնք կռուին առեն ալ Ռուսաստանի կողմանէ ազատութիւն ունին :

1 ՏՃ . Էթու :

8. Ռուսաստանի կայսորը այս հրովարտակը ( ուտաւ ) կը հանէ . Վալաքիոյ ու Մոլտակիոյ հոգոտարները իրենց իշխանութենէն հրաժարելով՝ այս աշխարհներուն խնամակալութիւնը յանձնուած է ու ուս օգնական պատերազմի Պուտապէրկ զօրավարին , ընդ վերատեսչութեամբ Կորչաքով սպարապէտ իշխանին :
10. Աւատրիոյ գահերէց դեռպան Բրոգէշ-Օսդըն պարոնը հետեւալ ծանուցումը կ'ընէ Գերմանիոյ Դաշնակցութեան . Աւատրիա , որ հաստատ միտքը դրած է Դրան ու Ռուսաստանի մէջ ելած կռուոյն մէջ չմանելու ինչուան որ կայսորութեան անձնական օգտին գէմ վլաս մը շըլլայ , ոչ պատերազմող կողմերուն , ոչ Եւրոպայի ուրիշ մեծագոյն տէրութիւններուն բռնած ընթացքէն պատճառներ տէսուա որ իր զինուորական ուժը աւելցնէ : Աւստի իր զորին ամբողջութիւնն որ հրամայած եր քեցցնելու՝ մասամբ պիտի կատարուի , որով Աւստրիոյ կայսորական ու Թագաւորական կառավարութիւնը բոլոր աշխարհիս գրաւական մը պիտի տայ ոչ միայն իրեն առանձին խաղաղասէր տրամադրութիւններուն վրայ , այլ և ասով պիտի իմացնէ թէ ինքը յոյս ունի որ երկու մերձաւոր աէրութեանց մէջ ելած կռիւը խաղաղութեամբ ըլլննայ : Ի վերայ այսր ամենայնի երբոր հարկ ըլլայ Աւստրիոյ որ իր մեծ շահերը ապահովցնէ : թէ իրեւ եւրոպական տէրութիւններէն մէկը , կայսերական ու թագաւորական կառավարութիւնը պատրաստ է շուտով ու ազդուութեամբ գործելու : Աւատրիոյ գահլիճը իր խաղաղութիւն ուղելու քաղաքավարութիւնը պիտի պահէ ու միշտ պիտի չմանայ որ այս տեղական կրակը ամենակի շտարածուի , և Բարիիու ու Լոնտարայի արքունիքներուն հետ միաբանած՝ այս կռիւը խաղաղութեամբ լմընցնելու միջոցները պիտի փնտուե , ինչպէս որ ինչուան հիմա կ'ընէր : — Բրուսիոյ՝ Գերմանական Դաշնակցութեան համար ունեցած գեսպանը կը յայտնէ թէ Բրուսիոյ թագաւորական կառավարութիւնն ալ գաշնակից

- տէրութիւններուն հետ միանալով պիտի ջանայ որ խաղաղութիւնը պահուի :
11. Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնեայ Պուլ-Շաւընչգայն կոմար պաշտօնագիր մը կը խրկէ Պրուք պարոնին , որ կայսերական կողմանէ փոխանորդ նուիրակի էր ի կոստանդնուպոլիս . Բարձրագոյն Դրան հոկտեմբերի 4ին շըլաբերականովը ( Տես ) Աւստրիոյ կայսերական ու թագաւորական կառավարութիւնը ցաւով պրտի տեսաւ որ Օսմանեան գահինը իր Ռուսաց կայսեր հետ ունեցած վէճը սիրով լընցնելու յօյսերը բոլորովն մէկի գրեր է : Դրան պատերազմ հրատարակելն ետքն ալ՝ Ռուսաց կայսրը բոլորովն կտրուած չեապեր գանդրական խօսակցութիւնները : Ռուսաց կայսրը թէ պէտ կը խնդրէ որ յունական կրօնքն ու կղերը կարենան իրենց առանձնաշնորհութիւնները պահէլ , բայց իրեն գիտաւորութիւնը այս է՝ որ այդ բանը Սուլդանին պաշտպանութեան ու իշխանութեան տակը ըլլայ : Ռուսաստանի փափաքածը միայն այս է . ապահովութիւն մը որ կրօնական նիւթերու մէջ յունական եկեղեցոյն ճիշդ առջի վիճակը պահուի , այսինքն թէ իրաւանց ու ազտութիւններու կողմանէ բոլորովին հաւասարութիւն ըլլայ յունական ու Սուլդանին իշխանութեան տակ եղած ուրիշ քրիստոնեայ կրօնքներու մէջ . գարձեալ՝ յունական եկեղեցին ալ վայէ այն չնորհքները . զորոնք Սուլդանը արդէն տուած է կամ ասկէց եաքը պիտի տայ ուրիշ քրիստոնեայ կրօնքներու : Այս հիմնական խնդիրներն որ ընդունուին , կայսրը պատրաստ է՝ Պուգրէշի մէջ անմիջապէս և ուղղակի նոր գանձադրական խօսակցութիւններ բանալու Դրան հետ : Ռւսուի Վեննայի գահինը կը յանձնէ իր կոստանդնուպոլիս եղած պատուիրակին որ վրայ տայ Դրան այս առաջարկութիւնները ընդունելու :
14. Տաճէի Ասիոյ բանակին կեդրոնը <sup>2</sup> սէրաքէր Ապտի փաշայի հրամանատարութեանը տակ՝ Ղարս քաղաքէն Ռուսաց Հայաստանի վրայ գացեր էր . բայց Օրպէկեան զօրավար իշխանը Պայլնտըրի մօտ , որ Ռուսաստանի ասմանագլւսին փրայ գեղ մըն է , կը զարնէ զանոնք ու Արփա չայ գետէն անգին կը վանէ :
18. Նոյն բանակին ձախ թեւը , որուն գլուխ կեցեր էր Ալի փաշա , ինչուան Սզզոր բէրդաւանը առաջեկած ըլլալով՝ հոնտեղը Պրունէր ուսւագ զօրավարէն կը հարուածի . ( Տես 26 ) :
23. Տրուէն ար Լիւի Գաղղիոյ Լոնտրա խաւրած գործակատարին <sup>3</sup> ձեռքով կը հաղորդէ Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը՝ Դրան
- 1 Գ.լ. Επνογέ.  
2 Բանակի մէջ կեդրոն կ'ըսուի՝ երկու թեւը բուն մէջ եղած զօրաց գունդերը :  
3 Գ.լ. Charge d'affaires.
- տալու ծանուցագրի մը ձեր , ու կը ծանուցանէ որ Պուլ կոմսին խնդիրքով՝ որոշուելը է Վեննայի նոր ծանուցագիրը կոստանդնուպոլիս խրկելու , խորհրդակցութեան ամէն անդամներէն ստորագրուած . ( Տ . 28 ) :
26. Ռուսաց զօրքը . որուն գլուխ էր Անտրոնիքով տեղակալ զօրապետ իշխանը . Անրլցիսայի քով կը յաղթեն Ալի Ռիզա փաշային զօրքին . ( Տես 18 ) :
28. Թագաւորին անուամբը՝ պաշտօնէից գահէրէց Մանդայֆֆէլ իշխանը կը բանայ բրուսիական սենեկաները : Բացման ճառին մէջ՝ ուրիշբաններու հետ այս ալ աւելցուց իշխանը . Կառավարութիւնը չուզեր ու չկրնար ալ ծածկել որ կասկած ունի թէ Արևելքի շխոթութիւններուն պատճառաւ Եւրոպից խաղաղութիւնը պիտի վերնայ , որ ինչուան հիմա շատ լաւ պահուած էր : Ի վերայ այսր ամենայնի կառավարութիւնը վատահ աչքով մը կը նայի ապառնին վրայ : Բրուսիա իր ուժին վրայ յեցած , ինչպէս ինչուան հիմա կ'ընէր՝ այսպէս ասկէ ետքն ալ պիտի ջանայ խաղաղութեան ու չափաւորութեան կողմը բռնելու , անկախ ու միանդամոյն անկողմնասէր կերպով մը խօսելով : Բայց ինչ կերպ ալ որ առնելու ըլլան ժամանակիս գիպուածները . թագաւորին կառավարութիւնը իրեն հաստատուն կանոն պիտի բռնէ ժողովդեան շահը , որն որ թագաւորութեան չահին հետ նոյն է , որ և իցէ ջանք ու գործողութիւն որ հարկ ըլլայ ընելու իրեն կողմանէ :
- Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն հրահանգ <sup>1</sup> մը կը խաւրէ Պարակէ տ' Իլիէ զօրավարին , գեսպան Գաղղիոյ ի Կոստանդնուպոլիս . ասոր մէջ կը գնէ այն խորհուրդներն որ ուրիշ գանձակից տէրութեանց պատուիրակներուն հետ միատեղ՝ Սուլդանին պաշտօնէիցը պիտի հաղորդէ : Կը յանձնէ գարձեալ զօրավարին որ առաջարկէ հաշտութեան նորէն փորձեր ընելու :
30. Ռուսի 6 նաւով նաւախումբ մը , որուն կը հրամայէր Կախիմով ծովակալի փոխանորդը . Սև ծովին ասիական ափունքներուն քովը լորովին կը փացացնէ Տաճէի նաւատաղորմին մէկ խումբը , որ 13 նաւէ կազմուած էր ու Սինոպի գիմաց խարիսխ նետած կը կենար . Նաւերէն մէկ մասը կ'ընկղի , մէկալ մասն ալ օդ կ'ելէ . 4,000 Տաճէի կը մեռնին . ծովակալը Օսման փաշան կը վիրաւորուի ու գերի կը բռնուի . Սինոպի մէկ մասը բոլոր կրակով կ'այրի :
- Պուտապէրկ զօրավարը , որ Դանութեան իշխանութիւններուն արտաքոյ կարգի լիազօր տեսուչ գրուեցաւ Ռուսերէն , Մոլտակիոյ Եաշմայրաքաղաքը կը հանի . ( Տ . 8 ) :

1 Գ.լ. Instruction.